ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Մ. Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՍՄԿԿ XXV համագումարը քննարկեց և հաստատեց «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղությունները»։ Այդ պատմական փաստաթղթում, որ հանդիսանում է կոմունիզմի կառուցման գործում ստեղծագործական մեծ աշխատանքների մի ծրագիր, արտահայտված է կոմունիստական կուսակցության տնտեսական ստրատեգիայի բարձրագույն նպատակը՝ սովետական մարդկանց կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի անշեղ վերելքը, տրված են այդ նպատակին հասնելու կոնկրետ ուղիները, այն է՝ հասարակական արտադրության դինամիկ և համամասնական զարգացումը, նրա արդյունավետության բարձրացումը, գիտատեխնիկական առաջընթացի արագացումը, աշխատանքի արտադրողականության աճը, ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում աշխատանքի որակի բարձրացումը։

Որպես ժամանակակից փուլում սովետական էկոնոմիկայի զարգացման հանգուցային պրոբլեմներից մեկը, համագումարը իր այդ որոշման մեջ հատուկ կերպով ընդգծեց ժողովրդական տնտեսության մի այնպիսի կենսականորեն անհրաժեշտ ճյուղի հետագա զարգացման անհրաժեշտությունը, որպիսին հանդիսանում է գյուղատնտեսությունը։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցման մեջ ընկ. Լ. Ի. Բրեժնևն ասաց, որ գյուղատնտեսության բնագավառում «...կուսակցությունն առաջադրում է փոխադարձաբար միմյանց հետ կապված երկու նպատակ։ Առաջինը՝ երկրին հուսալիորեն մատակարարել պարենամթերք և գյուղատնտեսական հում, դրա համար միշտ ունենալ բավարար ռեզերվներ։ Եվ երկրորդ՝ ավելի ու ավելի առաջ գնալ քաղաքի ու գյուղի կյանքի նյութական և կուլտուրակենցաղային պայմանների մերձեցման ուղիով, որը մեր ծրագրային պահանջն է»[1]։

Ժամանակակից էտապում ՍՄԿԿ ագրարային քաղաքականությունը, որ մշակվել է Լ. Ի. Բրեժնևի ղեկավարությամբ ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան (1965 թ.) պլենումի կողմից և կուսակցության հետագա որոշումներում, հանդիսանում է լենինյան ագրարային քաղաքականության հետագա ստեղծագործական զարգացումը։ Այդ քաղաքականության համաձայն, վերջին տարիներս կոլտնտեսական և սովխոզային արտադրության մեջ ներդրվում են մեծ գումարներ։ Կապիտալ ներդրումների 320 միլիարդ ռուբլի ընդհանուր

---

1 Լ. Ի. Բրեժնև. ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում. Երևան. 1976, էջ 80։

գումարից, որ մեր գյուղատնտեսությունն ստացել է սովետական իշխանության բոլոր տարիների ընթացքում, 213 միլիարդ ռուբլին բաժին է ընկնում վերջին երկու հնգամյակներին։ Այդ կապիտալ ներդրումները կենտրոնացվեր են երեք հիմնական ուղղություններում՝ մեքենայացման, մելիորացիայի և քիմիացման, որոնք հանդիսանում են գյուղատնտեսական արտադրության ինտենսիֆիկացիայի կարևորագույն գործոնները։

Կուսակցության XXV համագումարի հաստատած գյուղատնտեսական արտադրության առաջընթաց զարգացման հոյակապ պլանների լրացումն ու զարգացումն է հանդիսանում գյուղատնտեսության բնագավառում այն ընդարձակ կոմպլեքսային միջոցառումների պլանը, որն իր արտահայտությունն է գտել ՍՄԿԿ Կենտկոմի՝ վերջերս հրատարակված «Միջտնտեսական կոոպերացման և ագրոարդյունաբերական ինտեգրացման բազայի վրա գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումն ու համակենտրոնացումը էլ ավելի զարգացնելու մասին» որոշման մեջ։ Այդ որոշման նպատակն է՝ ստեղծել այնպիսի կայուն տնտեսական պայմաններ, որոնք ապահովեն ընդլայնված վերարտադրության տեմպերի ու մասշտաբների արագացումը կոլտնտեսություններում և սովխոզներում, հետևողականորեն իրականացնեն ինտենսիֆիկացիայի կուրսը, գիտատեխնիկական առաջընթացի ժամանակակից նվաճումների ներդրումը, նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքի կիրառումը, համաժողովրդական, կոլեկտիվ և անհատական շահերի ճիշտ զուգորդումը, միաժամանակ նշվում է սոցիալական միջոցառումների մի ողջ սիստեմ, որն ուղղված է գյուղի աշխատավորների կյանքի մակարդակի զգալի բարձրացմանը։

Գյուղատնտեսական արտադրության բարձրացման նպատակով ՍՄԿԿ XXIV համագումարի մշակած կոմպլեքսային երկարատև տնտեսական, նյութատեխնիկական և կազմակերպական միջոցառումների իրականացումը ինն երորդ հնգամյակի ընթացքում արդեն հնարավորություն տվեց այդ բնագավառում հասնելու զգալի հաջողությունների։ ՍՍՀՄ գյուղատնտեսության մեջ նշված ողջ կոմպլեքսի իրականացման համար կապիտալ ներդրումների գումարը կազմեց 131 միլիարդ ռուբլի։ Կոլտնտեսությունների և սովխոզների արտադրական ֆոնդերը հնգամյակի ընթացքում աճեցին 1,8 անգամ, տրակտորների թիվը՝ 21 տոկոսով, բեռնատար ավտոմեքենաներինը՝ 26 տոկոսով։ Շրջանառության մեջ դրվեց 9 միլիոն հեկտար մելիորացված հող։ Այդ միջոցառումների շնորհիվ ՍՍՀՄ գյուղատնտեսության համախառն արտադրանքը ինն երորդ հնգամյակում, ութերորդի համեմատությամբ, տարեկան աճեց 13 տոկոսով։ Չպետք է մոռանալ, որ անցած հնգամյակի հինգ տարիներից երկուսը՝ 1972 թ. և 1975 թ., խիստ անբարենպաստ էին։ Հատկապես պետք է նշել 1975 թ. երաշտը, որը խոնավության դեֆիցիտի տեսակետից հիշեցնում էր 1921 թ. խստագույն երաշտը։ Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ մեր կուսակցության իմաստուն քաղաքականությունը, սովետական ժողովրդի հերոսական աշխատանքը հնարավորություն տվեցին թուլացնել կլիմայական այդ անբարենպաստ պայմանների վնասակար ազդեցությունը գյուղատնտեսական արտադրության վրա։

Ինն երորդ հնգամյակի ընթացքում հետագա զարգացում ապրեց նաև Հայկական ՍՍՀ գյուղատնտեսությունը։ Հնգամյակի տարիներին գյուղատնտեսության մեջ պետական կապիտալ ներդրումների գումարը կազմեց 736 միլիոն ռուբլի, որը 54 տոկոսով ավելի է, քան նախորդ հնգամյակում։ Հիմնա-

կան ֆոնդերի իրացումը կազմեց 677 միլիոն ռուբլի, կամ 65,4 տոկոսով ավելի, քան ութերորդ հնգամյակում։ Գյուղատնտեսությունն ստացավ 49 հազար հեկտար նոր ոռոգվող հողեր, որի հետևանքով Հանրապետության ոռոգվող հողերի ընդհանուր տարածությունը հասավ 306 հազար հեկտարի։ Ջրարբիացվեց 126 հազար հեկտար անջրդի արոտավայր և յուրացվեց 7,6 հազար հեկտար անմշակ հող։

Զգալիորեն աճեց գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը։ Կոլտնտեսությունների և սովխոզների տրակտորային պարկը հնգամյակի ընթացքում մեծացավ 23 տոկոսով, բեռնատար ավտոմեքենաներինը՝ 34 տոկոսով։

Որոշ չափով զարգացան ինդուստրիալ հիմքերով ձվի, թռչունի մսի և խոզի մսի արտադրության մասնագիտացված պետական ձեռնարկությունները։ Ընդլայնվեց փակ գրունտում բանջարեղենի արտադրության ջերմոցների ցանցը։

Մի շարք գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասունների մթերատվության բարձրացման հետևանքով Հանրապետությունում նկատելի չափերով ավելացավ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը, ութերորդ հնգամյակի համեմատությամբ, ավելացավ 21,9 տոկոսով։

Հայահատիկային կուլտուրաների բերքատվությունը մեկ հեկտարից ութերորդ հնգամյակի տարիներին միջին թվով կազմել է 12 ցենտներ, իսկ իններորդ հնգամյակինը՝ 15,6 ցենտներ, շաքարի ճակնդեղինը, համապատասխանաբար, 250 և 270 ցենտներ, ծխախոտինը՝ 18,3 և 21,8 ցենտներ, բանջարեղենինը՝ 180 և 210 ցենտներ, բոստանային կուլտուրաներինը՝ 154 և 210 ցենտներ։

Բարձրացավ նաև անասունների մթերատվությունը։ Կոլտնտեսություններում և սովխոզներում մեկ կովի տարեկան կաթնատվությունը 1975 թ. կազմեց 1687 կգ, 1970 թ. 1495 կգ-ի փոխարեն, իսկ մեկ հավից ստացվող ձվերի քանակը, համապատասխանաբար, 143 և 131 հատ։

Այս հաջողությունները ավելի մեծ կլինեին, եթե Հանրապետության գյուղատնտեսության մեջ տեղ չգտնեին մի շարք թերություններ, բացթողումներ և սխալներ։ Սակայն այդ թերությունները չէին կարող էապես ազդել Հանրապետության գյուղատնտեսական արտադրության անշեղ աճի տեմպերի վրա։ Բավական է ասել, որ Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքը սովետական իշխանության տարիներին, 1913 թ. համեմատությամբ, աճեց համարյա 6 անգամ, իսկ նրա կազմում առաջատար տեղ գրավեցին այնպիսի արժեքավոր ճյուղեր, ինչպիսիք են խաղողագործությունը, պտղաբուծությունը, բանջարաբուծությունը և կաթնա-մսատու անասնաբուծությունը։ Բացի այդ, Հանրապետության մի շարք գյուղատնտեսական զոնաներում առաջացան ծխախոտի, շաքարի ճակնդեղի, խորդենու մշակման զարգացած օջախներ։ Այս ամենը վկայում է, որ Հայաստանում ձևավորվել է մասնագիտացված գյուղատնտեսություն՝ ըստ նրա բնական ու տնտեսական պայմանների և որ հստակորեն որոշվել է Հանրապետության գյուղատնտեսության տեղը աշխատանքի համամիութենական բաժանման մեջ։

Հաշվի առնելով գյուղատնտեսական մթերքների և հումքի տեղական պահանջմունքները, ինչպես նաև գինու, պահածոների, ծխախոտի, խորդենու յուղի, թարմ պտուղների արտադրության բնագավառում մեր Հանրապետու-

թյան բռնած տեղը աշխատանքի համամիութենական բաժանման մեջ, Հայաստանի գյուղատնտեսության առաջ դրվում են հետևյալ խնդիրները.

1. Ամեն կերպ զարգացնել արդյունաբերական խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը՝ զարգացած ծխախոտագործության, խորդենու և շաքարի ճակնդեղի արտադրության օջախներով.

2. Հանրապետության աճող բնակչությանը ապահովել բանջարեղենով, կարտոֆիլով, խաղողով, մրգերով, բոստանային կուլտուրաներով՝ ըստ ֆիզիոլոգիապես հիմնավորված սննդի նորմաների.

3. Արագ տեմպերով զարգացնել անասնապահությունը՝ սևփական (կոշտ և հյութեղ) և բերովի (ֆուրաժային հացահատիկ, այլ կոնցենտրատներ) կերով, նպատակ ունենալով հանրապետության աճող բնակչությանը ապահովել տեղական արտադրության կաթնամթերքով ու ձվով՝ ըստ ֆիզիոլոգիապես հիմնավորված նորմաների և հնարավոր առավելագույն չափերով կրճատել այն էական տարբերությունը, որ հանրապետությունում գոյություն ունի մսի և կենդանական յուղի սպառման ու արտադրության միջև.

4. Էապես ավելացնել թարմ բանջարեղենի, մրգերի և խաղողի արտահանությունը Սովետական Միության արդյունաբերական կենտրոնները։

Հասկանալի է, որ մեր հանրապետության գյուղատնտեսությունը նշված ուղղություններով ու մասշտաբներով զարգացնելու համար հարկավոր են մի շարք հնգամյակներ։

Տասներորդ հնգամյակը հանդիսանում է այդ նպատակներին հասնելու կարևոր ժամանակահատվածներից մեկը։

Նոր հնգամյա պլանով նախատեսվում է գյուղատնտեսության հետագա ինդուստրացման շնորհիվ ձեռք բերել հողագործության և անասնապահության արտադրանքի արտադրության կայուն աճ, որպեսզի հնարավոր լինի բարձրացնել բնակչության սննդամթերքների սպառման մակարդակը և ավելի մեծ չափերով ապահովվեն արդյունաբերության պահանջմունքները գյուղատնտեսական հումքի նկատմամբ։ Հաշվումները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական հիմնական արտադրանքի արտադրությունը մեկ անձի հաշվով 1980 թ. հանրապետությունում կհասնի հետևյալ տարեկան չափերի.

Արտադրանքի տեսակները	Չափի միավորը	1975 թ.	1980 թ.	1980 թ. 1975 թ. համեմատությամբ
Հացահատիկներ	կգ.	106,0	99,6	94,0
Բանջարեղեն	»	107,0*	135,5*	126,0
Կարտոֆիլ	»	68,0	92,6	136,2
Բոստանային կուլտուրաներ	»	27,0	36,2	134,1
Խաղող	»	73,8*	89,5*	121,2
Մրգեր	»	57,1*	64,5*	111,2
Միս (սպանդ. քաշ)	»	24,2	28,8	119,0
Կաթ	»	147,5	147,0	100,0
Ձու	հատ	126,0	164,5	130,6

* Հաշված նաև այն քանակը, որ ուղարկվում է արդյունաբերական վերամշակման (պահածոների և գինու արտադրության համար)։

Այս տվյալներից երևում է, որ հանրապետության բնակչության սննդի ստրուկտուրան 1980 թ. լավանալու է առավել արժեքավոր սննդամթերքների սպառման ավելացման հաշվին։

Գյուղատնտեսական մթերքների արտադրանքի աճը հանրապետությունում տասներորդ հնգամյակի ընթացքում պետք է ձեռք բերվի գլխավորապես գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասունների մթերատվության բարձրացման հաշվին՝ շնորհիվ հողագործության և անասնապահության կուլտուրայի բարձրացման, շնորհիվ ՍՄԿԿ ագրարային քաղաքականության հետևողական իրականացման, որը բխում է կուսակցության XXV համագումարի որոշումներից։ Ինչ վերաբերում է ցանքատարածություններին, ապա դրանք կսաճեն ընդամենը 2,4 տոկոսով, քանի որ հանրապետության հողային ռեսուրսները սահմանափակ են։

Գյուղատնտեսական մթերքների արտադրանքի տարեկան միջին քանակը 1976—1980 թթ., 1971—1975 թթ. համեմատությամբ, կավելանա հետևյալ չափերով.

Արտադրանքի տեսակները	Չափի միավորը	1971—1975 թթ.	1976—1980 թթ.	Աճը տոկոսներով
Հացահատիկներ	հազար տոն.	263,2	304,1	115,5
Միախոտ	»	14,6	16,6	113,7
Շաքարի ճակնդեղ	»	120,0	122,0	101,7
Խորդենի	»	36,4	45.0	123,6
Կարտոֆիլ	»	198,8	277,7	139,7
Բանջարեղեն	»	327,7	397,7	121,4
Բոստանային կուլտուրաներ	»	90,2	106,1	117,6
Խաղող	»	169,5	254,0	149,0
Մրգեր	»	109,8	166,0	152,6
Միս (սպանդ. քաշ)	»	62,4	78,7	122,9
Կաթ	»	403,0	429,8	106,7
Բուրդ	»	4,46	4,68	104,8
Ձու	մլն. հատ	305,9	305,9	155,5

Հանրապետության գյուղատնտեսական համախառն արտադրանքի տարեկան միջին ծավալը (1973 թ. համեմատելի գներով) նախատեսված է հասցրնել 779 միլիոն ռուբլու, որը 24,1 տոկոսով ավելի է իններորդ հնգամյակի համապատասխան ցուցանիշների համեմատությամբ և շատ ավելի է, քան ՍՍՀՄ համար նախատեսված միջին չափանիշը (14—17 տոկոս)։

Արտադրության նախատեսված ծրագրերը խիստ լարված են, բայց լիովին իրագործելի և գյուղատնտեսության աշխատավորներից պահանջում են ուժերի դգալի լարում, որպեսզի այդ ծրագրերը ոչ միայն կատարվեն, այլև գերակատարվեն, հատկապես մսի, կաթի և ձվի արտադրության ծավալի տեսակետից։

Տասներորդ հնգամյակում գյուղատնտեսական աշխատանքների ողջ կոմպլեքսի համար նախատեսված են կապիտալ ներդրումներ 1 310 միլիոն ռուբլու չափով, որը անցած հնգամյակի համապատասխան ներդրումների համեմատ կազմում է 144,6 տոկոս։ Այդ միջոցները իրացվելու են գյուղատնտեսության այնպիսի կարևորագույն խնդիրների կոմպլեքսային լուծման նպատակով, ինչպիսիք են՝ մելիորացիան, քիմիացումը, նյութատեխնիկական բազայի ամրապնդումը, ինդուստրիալ հիմքով անասնապահական կոմպլեքսների շինարարությունը, գյուղատնտեսության մեջ գիտատեխնիկական առաջադիմության տեմպերի արագացումը և այլն։

Կարևորագույն նշանակություն են ստանում ջրատնտեսական աշխատանքները։ Այդ նպատակով նախատեսված են 360 միլիոն ռուբլու կապիտալ ներդրումներ, որը 1,5 անգամ ավելի է, քան իններորդ հնգամյակում։

Ջրային ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործելու և ոռոգիչ սիստեմների շահագործման մակարդակը բարձրացնելու նպատակով նախատեսվում է վերանորոգել և տեխնիկապես բարելավել ոռոգման ցանցը՝ 25 հազար հեկտար տարածության վրա։ Հատկապես մեծ նշանակություն են ունենալու գետերի գարնանային և աշնանա-ձմեռային հոսքի կարգավորման հետ կապված միջոցառումները՝ ջրերի կուտակման համար ամբարտակներ կառուցելու միջոցով, այն հաշվով, որ հնարավոր դառնա նոր յուրացվող հողատարածությունների ոռոգումը, ինչպես նաև արդեն կառուցված ոռոգման սիստեմները ջրի մշտական պաշարներով ապահովելը։ Ջրամատակարարման մշտական աղբյուրներ դեռևս չունեցող այդ ոռոգիչ սիստեմները տասներորդ հնգամյակում կստանան այնքան ջուր, որ հնարավոր կդառնա 22 հազար հեկտար հողերի ոռոգումը։

Տասներորդ հնգամյակի ընթացքում կավարտվի Հայաստանում ամենախոշոր Ախուրյանի ջրամբարի շինարարության աշխատանքները։ Դրա շնորհիվ հնարավոր կդառնա ոռոգել նոր յուրացվող խոպան հողեր։

Ոռոգվող հողատարածությունները 1976—1980 թթ. կընդարձակվեն համեմատաբար փոքր չափերով (մոտ 20 հազար հեկտար), քան նախորդ հնգամյակներում։ Դա բացատրվում է այն բանով, որ անհրաժեշտ է նախատեսված միջոցները առաջին հերթին գործադրել գոյություն ունեցող ոռոգիչ սիստեմների բարելավման և ջրամբարների կառուցման նպատակով։

Բացի այդ, տասներորդ հնգամյակում առաջին անգամ լայն մասշտաբներով կսկսվեն Արարատյան դաշտի մոտ 35 հազար հեկտար տարածություն բռնող սողային աղուտների չորացման, աղազերծման, ոռոգման և յուրացման աշխատանքները։ Մինչ այժմ այդ աշխատանքները կատարվել են ոչ կոմպլեքսային ձևով և բազմաթիվ մանր հողակտորների վրա, որի հետևանքով ելադում էր իրականացվող մելիորատիվ աշխատանքի արդյունավետությունը։ Ներկայումս այդ աշխատանքները իրականացվելու են գիտականորեն հիմնավորված գլխավոր սխեմայի համաձայն, խոշոր հողատարածությունների վրա, այն հաշվով, որ նախապայմաններ ստեղծվեն յուրացվող այդ հողերը պատրաստելու մի շարք արժեքավոր կուլտուրաների՝ խաղողի, մրգերի, բանջարեղենի և կերի կուլտուրաների մշակման համար։ Ընթացիկ հնգամյակում, ըստ հաստատված պլանի, նախատեսված է բարելավել Արարատյան դաշտի 13 հազար հեկտար գերխոնավացած աղուտների մելիորատիվ վիճակը, ինչպես նաև գյուղատնտեսական յուրացման համար նախապատրաստել

յիովին աղազերծված 2000 հեկտար հող։ Արարատյան դաշտի աղուտների գյուղատնտեսական յուրացման համար նախատեսված աշխատանքի լիակատար ավարտումը հանդիսանալու է մի խոշորագույն միջոցառում Հայաստանի գյուղատնտեսության վերելքի ճանապարհին։

Ոռոգվող հողագործության բազայի վրա տասներորդ հնգամյակում հետագա զարգացում կստանան հանրապետության բուսաբուծության առաջատար ճյուղերը՝ խաղողագործությունն ու պտղաբուծությունը։

Նախատեսվում է խաղողի տնկարաններում նկատվող նոսրացումները վերացնել 28,5 հազար հեկտար տարածության վրա, որը կազմում է խաղողի այգիների ողջ տարածության 90 տոկոսը, ինչպես նաև ստեղծել 6500 հեկտար նորատունկ խաղողի այգիներ։ Պտղատու այգիներում նոսրացումները վերացվելու են 15,6 հազար հեկտարի վրա (որ կազմում է նրանց ընդհանուր տարածության 44 տոկոսը) և տնկվելու են 4800 հեկտար նոր պտղատու այգիներ։ Ծրագրված է զգալիորեն բարձրացնել այդ արժեքավոր կուլտուրաների մշակման մակարդակը՝ առաջավոր գիտության և փորձի ներդրման, ինչպես նաև բարձրորակ տնկանյութերի արտադրության գործի արմատական բարելավման միջոցով, կազմակերպելով լավագույն սորտերի նոր տնկարաններ և վերակառուցելով գոյություն ունեցող տնկարանների աշխատանքները։

Հնգամյա պլանով նախատեսված է 36 հեկտար ընդհանուր տարածությամբ ջերմոցային նոր կոմբինատների ստեղծումը, որը հնարավորություն կտա 1980 թ. ավելի քան 2 անգամ մեծացնել քաղաքային բնակչության կողմից սպառվող ջերմոցային բանջարեղենի օգտագործումը։

Մեծ աշխատանք է կատարվելու հանրապետության մեծ քաղաքների և արդյունաբերական կենտրոնների շրջակայքում մերձքաղաքային գոտիներ ստեղծելու ուղղությամբ, որոնց նպատակն է լինելու բավարարել բնակչության պահանջմունքները կաթի, բանջարեղենի, վաղահաս կարտոֆիլի, բուսական կուլտուրաների և մրգերի գծով։ Այդ նպատակով հատուկ ուշադրություն է դարձվելու բանջարանոցային կուլտուրաներով զբաղված մանր հողակտորների վերացմանը, քանի որ նման մանրատումը խանգարում է բանջարաբուծական աշխատանքների մեքենայացմանը, բերքատվության բարձրացմանը և արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը։ Մեծ ուշադրություն է դարձվելու բանջարաբուծության կենտրոնացման գործին, ստեղծվելու են բանջարանոցային տարբեր կուլտուրաների և վաղահաս կարտոֆիլի երաշխավորված արտադրություն գոտիներ։

Այդ նույն նպատակներով մեծացվելու է կովերի գլխաքանակը ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ, հատկապես, մերձքաղաքային գոտիներում։ Ընդհանուր առմամբ, հանրապետության բոլոր կարգի տնտեսություններում կովերի տեսակարար կշիռը հասցվելու է 41 տոկոսի՝ 1975 թ. 38,6 տոկոսի փոխարեն։ Այդ միջոցառումը հնարավորություն կտա նաև մեծացնելու խոշոր եղջերավոր անասունների մատղաշի գլխաքանակը՝ մսի արտադրության նպատակով։ Այդ նույն նպատակով կառուցվելու են պետական կաթնարտադրական կոմպլեքսներ՝ 12000 կովերով և տարեկան 37,5 հազար տոննա կաթի արտադրությամբ։

Բացի այդ, նախատեսված է շարք մտցնել ձվատու հավաբուծության նոր ֆաբրիկաներ՝ 780 հազար ածան հավերով և մսատու հավաբուծության նոր ֆաբրիկաներ՝ տարեկան 10 միլիոն մսացու ճտերով։ Շարք են մտնելու եղ-

վարդի անասնաբուծական կոմպլեքսը՝ 10 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուններով և խոզաբուծական երկու խոշոր կոմպլեքսներ Թալինի շրջանում։ Այդ ամենի հետևանքով 1980 թ. անասնաբուծական կոմպլեքսներում և թռչնաֆաբրիկաներում արտադրվելու է 32,6 հազար տոննա միս (որը կկազմի հանրային ողջ սեկտորի արտադրանքի ծավալի 33 տոկոսը) և 280 միլիոն ձու (համապատասխանաբար՝ 81 տոկոս)։ Կլուծվի արդյունաբերական կոմպլեքսները կենդանիների ու թռչունների առավել արդյունավետ ցեղատեսակներով ապահովելու պրոբլեմը։ Մշակված են և կիրականացվեն մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է վերացնել անասնաբուծական կոմպլեքսների ու թռչնաֆաբրիկաների կազմակերպման և շահագործման բնագավառում գոյություն ունեցող թերությունները։ Այսպես, օրինակ, պետք է արագացվի և ավարտվի ոչ արտադրական օբյեկտների շինարարությունը, որոնց բացակայությունը խանգարում է վերոհիշյալ կոմպլեքսների արտադրական նորմալ գործունեությանը։ Դրականորեն կլուծվի անասնաբուծական կոմպլեքսները անհրաժեշտ չափերի հողամասերով բավարարելու պրոբլեմը, որի շնորհիվ հնարավոր կդառնա սեփական կոշտ կերի բազաների ստեղծումը։

Հատուկ ուշադրություն է դարձվելու մատղաշի ինտենսիվ բուման ուղղությամբ առաջավոր տնտեսությունների փորձը արտադրության մեջ լայնորեն ներդնելու վրա։

Ամենավճռական միջոցներ են ձեռնարկվելու, որպեսզի անասնակերը օգտագործվի ռացիոնալ կերպով և խնայողաբար, քանի որ ռացիոնների ոչ լիարժեքությունն ու անհավասարակշռվածությունը հանրապետության շատ տնտեսություններում խստիվ պակասեցնում է կերից ստացվող արդյունքը։ Այդ նպատակով կոլտնտեսություններում և սովխոզներում կազմակերպվելու են կերախոհանոցներ, անասնակերերը հարստացվելու են սպիտակուցանյութերով, ներդրվելու են կերի կուտակման և պահպանման առաջավոր մեթոդներ։ Այս միջոցառումները, զուգորդվելով անասնաբուժական խիստ հսկողությամբ, կոչված են խստորեն կրճատելու նաև անասունների ստերջության տոկոսը։

Անասնապահության կերի բազայի ամրապնդման նպատակով տասներորդ հնգամյա պլանով նախատեսված է զգալիորեն ընդլայնել անասնակերի արտադրությունը։ Բավական է ասել, որ բազմամյա կերախոտերի ցանքատարածությունն ավելանալու է 33 տոկոսով, սիլոսային կուլտուրաներինը՝ 17 տոկոսով, կերի արմատապտուղներինը՝ 50 տոկոսով։ Մեծ չափերով ավելանալու է նաև նրանց բերքատվությունն ու, հետևաբար, համախառն արտադրանքը։ Արոտավայրերի արդյունավետության բարձրացման համար նախատեսված է կուլտուր-տեխնիկական և հակաէրոզիոն միջոցառումների մի ամբողջ կոմպլեքս։

Արոտավայրերի և խոտհարքների արմատական և մակերեսային լավացման միջոցառումներ են կիրառվելու 89,3 հազար հեկտար տարածության վրա, ջրարբիացվելու են 60 հազար հեկտար արոտավայրեր։

Անասնակերի պահանջին համապատասխան, 1980 թ. նախատեսված է արտադրել 600 հազար տոննա կոմբինացված կեր (որը 50 տոկոսով ավելի է, քան 1975 թ.), միաժամանակ բարձրացնելով դրա որակը։ Պետական ֆոնդերից 1980 թ. բաց է թողնվելու 625 հազար տոննա ֆուրաժային հացահատիկ՝ 1975 թ. 407 հազար տոննայի փոխարեն։

Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում տեխնիկական առաջադիմությունը ներդնելու կարևորագույն պայմաններից մեկը քիմիացումն է։ Հնգամյակի ընթացքում հանքային պարարտանյութերի մատակարարումը մեծանալու է 40,8 տոկոսով։ Քանակական աճի հետ մեկտեղ նախատեսվում է նաև դրանց որակի հետագա բարձրացումը՝ ննդանյութերի կոնցենտրացիայի մեծացման, գրանուլացված բարդ պարարտանյութերի տոկոսի բարձրացման և այլ միջոցառումների շնորհիվ։ Ստեղծվելու են պարարտանյութերի բեռնման-բեռնաթափման և հողի մեջ դրանք մտցնելու համար նոր մեքենաներ ու մեխանիզմներ։

1976—1980 թթ. ավելի ևս բարելավվելու է գյուղատնտեսությունը տեխնիկապես զինելու գործը։ Տրակտորների պարկը հանրապետության գյուղատնտեսության մեջ 1980 թ. վերջին, 1975 թ. համեմատությամբ, մեծանալու է 20 տոկոսով, բեռնատար ավտոմեքենաներինը՝ 30,4 տոկոսով։ Զգալիորեն մեծանալու է գյուղատնտեսական մեքենաների մատակարարումը (46 տոկոսով)։ Պետք է հաշվի առնել նաև այն, որ ընթացիկ հնգամյակում գյուղատնտեսությունը կստանա բազմաթիվ նոր մեքենաներ, որոնք իրենց հզորության, առանձին տեխնոլոգիական նպատակների համադրման, տեխնոլոգիական պրոցեսների ղեկավարման ու հսկողության ավտոմատացման, բանվորական արտադրությունների մեծացման և այլ ցուցանիշների տեսակետից զգալիորեն կգերազանցեն մինչև օրս եղած մեքենաներին ու մեխանիզմներին։ Կարտադրվեն ավելի կատարյալ մեխանիզմներ անասնապահական ֆերմաների կոմպլեքսային մեքենայացման համար։ Մեքենաների ու մեխանիզմների աճը գյուղատնտեսության մեջ, նրանց սիստեմատիկ կատարելագործումը պահանջում են հնգամյակի առաջիկա տարիներին ուժեղացնել և ընդարձակել մեխանիզատորների բարձրորակ կադրերի պատրաստման գործը։

Նախորդ շարադրանքից երևում է, թե ինչպիսի բարդ պրոբլեմներ ու խնդիրներ են կանգնած տասներորդ հնգամյակում մեր հանրապետության գյուղատնտեսության առաջ։ Դրանց հաջող լուծումը հնարավոր է միայն գիտության նվաճումների և առաջավոր փորձի լայն օգտագործման դեպքում։ Հանրապետության գիտնականները պետք է իրենց զգալի ավանդը ներդնեն, որպեսզի ստեղծվեն գյուղատնտեսական կուլտուրաների բարձր բերքատու սորտեր և անասունների ավելի մթերատու ցեղատեսակներ, հողագործական և անասնապահական աշխատատար պրոցեսների մեքենայացման համար անհրաժեշտ արդյունավետ մեքենաներ, ներդրվեն գյուղատնտեսական կուլտուրաների մշակման և մթերատու անասունների բազմացման ու կերակրման նոր, առավել արդյունավետ եղանակներ և այլն։

Գիտահետազոտական կազմակերպությունների դերը մեծ է նաև այնպիսի կարևոր պրոբլեմների լուծման բնագավառում, ինչպիսիք են՝ գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխումը, մասնագիտացումը և համակենտրոնացումը, միջտնտեսական կոոպերացման և ագրո-արդյունաբերական ինտեգրացիայի հետ կապված հիմնավորված առաջարկությունների մշակումը։

Այս տարվա ապրիլին կայացավ ՀԿԿ Կենտկոմի պլենումը, որ նվիրված էր ՍՄԿԿ Կենտկոմի՝ «Միջտնտեսային կոոպերացման և ագրոարդյունաբերական ինտեգրացման բազայի վրա գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումն ու համակենտրոնացումը էլ ավելի զարգացնելու մասին» որոշման կատարմանը։ Այս իրոք պատմական փաստաթղթում մեր կուսակ-

ցությունը գյուղատնտեսության հետագա զարգացման համար որպես մայրուղի նախանշեց և հիմնավորեց տնտեսության այդ կարևոր ճյուղում մասնագիտացումը հետևողականորեն խորացնելու, համակենտրոնացումը ուժեղացնելու և ժամանակակից ինդուստրիալ հիմք ստեղծելու անհրաժեշտությունը։

ՍՍՀՄ շատ հանրապետությունների և մարզերի փորձը համոզիչ կերպով ցույց է տվել, որ միջտնտեսային կոոպերացիան հնարավորություն է ընձեռում գյուղատնտեսության տարբեր ճյուղերում, և առանձնապես անասնապահության բնագավառում, նորագույն տեխնիկայով զինված խոշոր միջտնտեսային ձեռնարկություններ ստեղծելու միջոցով գիտատեխնիկական առաջադիմության ոլորտի մեջ ընդգրկելու կոլտնտեսությունների ու սովխոզների մեծ մասը, դրանով իսկ նախապայմաններ ստեղծելով նրանց տնտեսության բազմաճյուղությունը վերացնելու, խոշոր մասնագիտացված արտադրության առավելություններից օգտվելու և իրենց նյութական, ֆինանսական ու աշխատանքային ռեսուրսները ավելի ռացիոնալ կերպով օգտագործելու համար։

Այդ կարևոր գործը, ինչպես նշեց պլենումում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Դեմիրճյանը, Սովետական Հայաստանում առայժմ գտնվում է իր սկզբնական փուլում. հանրապետությունում ստեղծված է տարբեր պրոֆիլների ընդամենը 26 միջտնտեսային ձեռնարկություն։

ՀԿԿ Կենտկոմի ապրիլյան (1977 թ.) պլենումը բացահայտեց մեր հանրապետությունում կոոպերացման և ագրոարդյունաբերական ինտեգրացման պոտենցիալ հնարավորությունները, դրանց իրականացման սկզբունքները, որոշեց այդ կարևորագույն աշխատանքների բնագավառում կուսակցական, սովետական ու տնտեսական օրգանների և գիտական հիմնարկների առջև կանգնած խնդիրները։ Պլենումը ընդգծեց, որ տասներորդ հնգամյակը Հայաստանում բեկման շրջան է հանդիսանալու նաև այն տեսակետից, որ յուրաքանչյուր զոնայի, յուրաքանչյուր շրջանի ու տնտեսության համար գիտականորեն հիմնավորված պլաններով պետք է ստեղծվի միջտնտեսական ձեռնարկությունների ընդարձակ ցանց։ Հնգամյակի տարիները լինելու են նաև նշանավոր տարեթվեր՝ հանրապետության գյուղատնտեսության ղեկավարման կազմակերպման ձևերի կատարելագործման տեսակետից։

ՍՄԿԿ XXV համագումարի նախատեսած կոմունիստական շինարարության այն ծրագիրը, որ նախատեսված է տասներորդ հնգամյակի համար, մարմնավորում է կուսակցության լենինյան գլխավոր գիծը։ Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի շինարարության մի նոր փուլն է հանդիսանում արդյունաբերության զարգացման զուգորդումը գյուղատնտեսության անընդհատ վերելքի հետ։ Դա թույլ կտա ապահովել արտադրության հետագա աճն ու մեծ կայունությունը, նրա արդյունավետության ամեն կերպ մեծացումը և, որ ամենագլխավորն է, բարձրացնել զարգացած սոցիալիզմի մեր երկրի աշխատավորների բարեկեցությունը։